## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**22.05.2020թ. կնքված N <<ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2020/4>> գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

ք. Չարենցավան <<10>> 07 2020թ.

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Հ. Կ. Շահգալդյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ <<Պատվիրատու>>, մի կողմից, և <<ԱՎԱԳ ՇԻՆ 1>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Ավագյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ <<Կապալառու>> մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 22.05.2020թ. կնքված N <<ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2020/4>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ կետը, պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 08.07.2020թ.-ին ներկայացրած թիվ 2617/04 զեկուցագիրը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 22.05.2020թ. կնքված N <<ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2020/4>> գնման պայմանագրի գինը ավելացնել 295000 (երկու հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամի չափով, ընդ որում՝ ընդհանուր պայմանագրի գինը կկազմի 3291400 (երեք միլիոն երկու հարյուր իննսունմեկ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **<<ՊԱՏՎԻՐԱՏՈՒ>>** | **<<ԿԱՊԱԼԱՌՈՒ>>** |
|---|---|
| **Չարենցավան համայնք** | **<<ԱՎԱԳ ՇԻՆ 1>> ՍՊԸ** |
| **ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1** | **Կոտայքի մարզ, գ. Քաղսի, 4-րդ թաղամաս տուն 88** |
| **ՀՀ ՖՆ ԳՎ** | **<<Արդշինբանկ>> ՓԲԸ** |
| **Հ/Հ 900132132011** | **Հ/Հ 247640223308000** |
| **ՀՎՀՀ 03022497** | **ՀՎՀՀ 03024889** |
| | **Էլ. փոստ՝ vip-consalt@mail.ru** |
| | **Հեռ. 077-57-77-78** |
| **Համայնքի ղեկավար՝ Հ. Կ. Շահգալդյան** | **Տնօրեն՝ Հ. Ավագյան** |
| **(ստորագրությունը)** | **(ստորագրությունը)** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |